



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2021 թվականի N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅՍԻ 31-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի
մայիսի 31-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 31-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
- 3.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Լեոնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
- 4.«Տաշիր համայնքի աղբի կոնսերվացում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
- 5.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
6. «Գյուղտեխնիկայի ձեռքբերում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:
- 7.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Սարատովկա և Կաթնառատ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի N24-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:

<<	ԱՆՈՒՆԱԶԳԱՆՈՒՆ	կողմ	դեմ	ձեռնպահ
		9	չկա	Չկա
1	Բաղդասարյան Կարեն			
2	Բաղդասարյան Միշա			
3	Գալստյան Անդրանիկ			
4	Հարությունյան Սարգիս			
5	Մարդոյան Հայկ			
6	Մարդոյան Սուսան			
7	Պողոսյան Արթուր			
8	Ռեվազյան Հայկանուշ			
9	Վելիցյան Նորիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021 մայիսի 31
ք. Տաշիր



Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր:
Մարզ	Լոռու մարզ:
Համայնքը /համայնքները	Տաշիր խոշորացված համայնք՝ Տաշիր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 163 կմ է, մարզկենտրոն Վանաձորից 53 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	01.01.2019թ. պետոգիստրիի տվյալների համաձայն 16126 մարդ:
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր:
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Ոչ:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող	Տաշիր համայնքի բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրը կենտրոնացված ջրամատակարարումն է: Զրամատակարարման համակարգը սպասարկում է Վեոլիա Զուր ընկերությունը: Համայնքում տեղադրված են ջրաչափեր և սահմանված է ջրի վարձ: Համայնքի բնակչության 95 %-ին խմելու ջուրը հասանելի է: Զրամատակարարումը 24 ժամյա է: Համայնքն ունի կոյուղագիծ և տնային տնտեսությունների 60 %-ը միացված է կոյուղագծին: Համայնքն ունի կենտրոնացված գազամատակարարում: Համայնքի ներքնակավայրային ճանապարհային ցանցի երկարությունը 59,5 կմ է , որից ասֆալտապատ՝ 15,860 կմ, խճային՝ 31.04կմ, գրունտային՝ 12,5 կմ: Ներքնակավայրի ճանապարհային ցանցի վիճակը վար է: Համայնքի ներսում լուսավորված ճանապարհների երկարությունը 23,5 կմ է:

համայնքի բնակչության
տոկոսը,

- ոռոգման համակարգից
օգտվող բնակչության տոկոսը
և համայնքում
գյուղատնտեսական հողերից
ոռոգվող հողատարածքների
տոկոսը,

- լուսավորության համակարգի
առկայությամբ փողոցների
տոկոսը՝ համայնքի ընդհանուր
փողոցների մեջ և նշել
էներգախնայող և LED
լուսավորություն է, թե ոչ

Ծրագրի ընդհանուր
նկարագրությունը և դրա
իրականացման
անհրաժեշտությունը

Համայնքում ոռոգման համակարգը բացակայում է, քանի որ
համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը անջիղի
են:

ՀՀ Լոռու Մարզի Տաշիր քաղաքում կա 40 բազմաբնակարան
շենք, 1160 բնակարան: Վերջին տարիներին Տաշիրի
համայնքապետարանը սեփական և սուբվենցիոն միջոցներով
վերանորոգել է մի շարք բազմաբնակարան շենքերի տանիքներ
և ջրամույրեր, սակայն բնակարանների ջեռուցման և
էներգախնայողություն ապահովելը հնարավոր է միայն
լրջագույն ներդրումների դեպքում: Սույն ծրագրով
նախատեսվում է Տաշիր համայնքի Անի բնակելի զանգվածի
թիվ 4 շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի, Անի բնակելի
զանգվածի թիվ 2 շենքի 1-ին մասնաշենքի ամբողջական
ջերմաարդյունավետության ու էներգախնայողության կիրառում
և Անի բնակելի զանգվածի 5-րդ շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ
մասնաշենքի տանիքների վերանորոգում և ամբողջական
ջերմաարդյունավետության ու էներգախնայողության
կիրառում, ինչպես նաև Դպրոցականների 20 և Վ. Սարգսյան
12 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և
մասնակի էներգախնայողության կիրառում, Գեղափնյա 13
շենքի մասնակի ջերմաարդյունավետության ու
էներգախնայողության կիրառում:

Ծրագրի ակնկալվող
արդյունքները, որոնց միջոցով
պետք է հասնել ծրագրի
իրականացման նպատակին

Ծրագրի արդյունքում ակնկալվում ենք ունենալ

- Բնակիչների ջեռուցման ծախսերի կրճատում,
- 10 շենքի կադաստրային արժեքի բարձրացում,
- Շենքերի շահագործման երկարացում,
- Արտաքին և ներքին տեսքի բարեկարգում,
- 115 և ավել ընտանիքների սոցիալական պայմանների
բարելավում,
- Բնակիչների ջեռուցման ծախսերի կրճատում:

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Այս աշխատանքները կյանքի կոչելու համար՝ • Տաշիրի համայնքապետարանը 2021 թվականի բյուջեով կնախարեսի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, • համայնքը կստանա ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, • կիրականացվի Գնումների մասին ՀՀ Օրենքին, գնումների հետ կապված ՀՀ Կառավարության որոշումներին և օրենսդրական այլ ակտերին համապատասխան, կկազմակերպվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և այդ փաստաթղթերին համապատասխան, աշխատանքների կատարման գնման գործընթաց, • կկատարվեն ծրագրով նախանշված աշխատանքները, • կապահովվի աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, ինչպես նաև վերահսկողություն համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից, աշխատանքների ավարտից հետո շինարարական կազմակերպության, համայնքապետարանի, տեխնիկական, հեղինակային վերահսկողների և նախագիծը կազմողների միջև կիրականացվեն հանձման-ընդունման աշխատանքներ:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրի իրականացման արդյունքում Համայնքում կունենանք բարելավված շենքային պայմաններ ինչպես նաև կավելանան շենքերի կադաստրային արժեքները: Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի անմիջական ազդեցությունը կրողները և շահառուները հանդիսանում են Տաշիր համայնքի Անի բնակելի զանգվածի թիվ 2 շենքի 1-ին մասնաշենքի, Անի բնակելի զանգվածի թիվ 4 շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքը և Անի բնակելի զանգվածի թիվ 5-րդ շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքը, Վ. Սարգսյան 12, Դպրոցականների 20 և Գեորգիյևա 13 բազմաբնակարան շենքերի բոլոր բնակիչները:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում նախատեսվում է ստեղծել 35-40 ամանակավոր աշխատատեղ՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնողներ:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 798424.0դրամ. Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի

Ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը	Փաս- տացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերը/հազ. դրամ/	798424.0	704603.0	88.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	714089.5	620268.4	86.9
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	487342.1	484958.6	99.5
- Սեփական եկամուտներ	168017.9	165634.5	98.6
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	330181.0	220744.3	66.9
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	245847.4	136909.8	55.5
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	84334.5	84334.5	100
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	798424.0	558282.5	69.9
- Վարչական բյուջեի ծախսեր	487342.1	382316.6	78.4
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	330181.9	177065.9	53.6
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	330181.9	177065.9	53.6
- ճանապարհաշինություն	63456.1	52983.1	83.5
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	94529.2	75950.8	80.3
- ջրամատակարարում	434.5	304.0	70
- փողոցային լուսավորություն	56294.0	41490.0	73.7
- շրջակա միջ. Պահպանություն	4800.0	4800.0	100
- կոմունալ ծառայություն	2000.0	1335.0	66.7
- բնակ. Շին.	114668.1	19213.9	16.8
- մշակույթ			

* Գույքի օտարումից
մուտքեր

-6000.0 -19010.8 316.8

Համայնքի ընթացիկ
տարվա բյուջեն

745026.8 դրամ.

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող
եկամուրները, պլանավորված ծախսերը՝
առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային
մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից
պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին
բացվածքով:

Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /հազ. 745026.8

Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուրների 570706.1

առանձնացում

- Վարչական բյուջեի եկամուրներ, որից՝ 570706.1

- սեփական եկամուրներ 178477.4

- Ֆոնդային բյուջեի մուտքեր 146320.7

- Ֆոնդային բյուջեի եկամուրներ 0

- Տարեսկզբի ազատ մնացորդ 146320.4

Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, 717026.81

- Վարչական բյուջեի ծախսեր 570706.1

- Ֆոնդային բյուջեի ծախսեր 146320.7

Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված 146320.7

ծախսերը, որից՝

- քննիչական բնույթի հանրային ծառայություններ 31198.9

- ճանապարհաշինություն 25472.7

- շրջակա միջավայրի պահպանություն 20500.0

- ջրամատակարարում 15149.0

- յուսավորություն 35000.1

- գյուղատնտեսություն 16500.0

- կոմունալ ծառայություն 1500.0

- բնակարարին շինարարություն 29000.0

- գույքի օտարումից մուտքեր -28000.0

Համայնքի ընթացիկ տարվա
բյուջեի նախագծով
կանխատեսվող բյուջետային
մուտքերի (ներառյալ
ֆինանսական

համահարթեցման դոտացիայի
գծով կանխատեսվող
մուտքերը) հաշվին նշված
ծրագրի իրականացման
անհնարինության
հիմնավորումը
(համապատասխան
հաշվարկներով

Համայնքի 2021թ-ի բյուջեի նախատեսված քննիչական
մուտքերը կազմում է 717026.8 դրամ,
որից վարչական բյուջեի մուտքեր՝ 570706. դրամ

Որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ – 182829.3
դրամ /իր մեջ ներառում է ապարարի պահպանման՝
աշխատավարձ, գործուղումներ, կոմունալ վճարումներ,
կապ, տրանսպորտային նյութեր, համակարգչային
ծառայություններ և այլ ծախսեր/

Պաշտպանություն – 2000.0

Տնտեսական հարաբերություններ – 16972.7 դրամ /իր մեջ ներառում է գյուղատնտեսության, տրանսպորտի և ճանապահային բնագավառում իրականացվելիք ծախսերը/

Շրջակա միջավայրի պաշտպանություն – 76000.0 դրամ /իր մեջ ներառում է աղբահանության և սելավափարների մաքրման, կեղտաջրերի հեռացման ծախսեր/

Կոմունալ ծառայություն – 174559.1 դրամ /իր մեջ ներառում է ջրամատակարարման և լուսավորման ծառայություններ/

Առողջապահություն – 0

Մշակույթ – 44810.0 դրամ / , ՀՈԱԿ-ի պահպանման ծախսեր /ՀՈԱԿ-ում գործում է մշակույթի տուն և մանկապարտեզ/

Կրթություն – 121155.0 դրամ /ներառում է նախադպրոցական և նիշնակարգ կրթության բնագավառի ծախսեր/

Սոցիալական պաշտպանություն – 6500.0 դրամ /համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն/

Պահուստային ֆոնդ՝ 92200.7 դրամ:

Նշված ծախսերի հետ զուգահեռ միայն բյուջեով հնարավոր չէ իրականացնել Տաշիր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացման ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝

80.000.000(100%)

- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,

շինարարական օբյեկտների նախագծման արժեքը՝ 1.600.000 դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,

- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 1.250.000 դրամ,

- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 520.688 դրամ,

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը 160.000 դրամ,

- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական

վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,	
ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	28.882.500 դրամ (36.1%)
Այլ ներդրողներ	19.117.500 դրամ (23,9%), ՄԱԿ:
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը 01.05.2021թ. Տևողությունը 7 ամիս:
Ծրագրի ծախսերը	Ծրագրի ընդհանուր շինարարական արժեքը կազմու է 76.469.312 ՀՀ դրամ:
Ամսաթիվ	05.03.2021թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Հ. Կիրակոսյան

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ hayarpi.kirakosyan@bk.ru, (+374)77-818568

Համայնքի ղեկավար՝



Էդգար Արշակյան
(անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2021 թվականի N 46-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ,
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԵՐՄԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ » ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման» սուբվենցիոն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ	ԱՆՈՒՆԱԶԳԱՆՈՒՆ	կողմ 9	դեմ չկա	ձեռնպահ չկա
1	Բաղդասարյան Կարեն			
2	Բաղդասարյան Միշա			
3	Գալստյան Անդրանիկ			
4	Հարությունյան Սարգիս			
5	Մարդոյան Հայկ			
6	Մարդոյան Սուսան			
7	Պողոսյան Արթուր			
8	Ռեվազյան Հայկանուշ			
9	Վելիցյան Նորիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Լ. ԱՐՇԱԿՅԱՆ

2021 մայիսի 31
ք. Տաշիր



Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում:
Մարզ	Լոռու մարզ:
Համայնքը /համայնքները	Տաշիր խոշորացված համայնք՝ Տաշիր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 163 կմ է, մարզկենտրոն Վանաձորից՝ 53 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	01.01.2021թ. պետքեզիստի տվյալների համաձայն 16126 մարդ:
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Ոչ:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների, վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և	Տաշիր համայնքի բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրը կենտրոնացված ջրամատակարարումն է: Ջրամատակարարման համակարգը սպասարկում է Վեոլիա Ջուր ընկերությունը: Համայնքում տեղադրված են ջրաչափեր և սահմանված է ջրի վարձ: Համայնքի բնակչության 95 %-ին խմելու ջուրը հասանելի է: Ջրամատակարարումը 24 ժամյա է: Համայնքն ունի կոյուղագիծ և տնային տնտեսությունների 60 %-ը միացված է կոյուղագծին: Համայնքն ունի կենտրոնացված գազամատակարարում: Համայնքի ներբնակավայրային ճանապարհային ցանցի երկարությունը 59,5 կմ է , որից ասֆալտապատ՝ 15,860 կմ, խճային՝ 31.04կմ, գրունտային՝ 12,5 կմ: Ներբնակավայրի ճանապարհային ցանցի վիճակը վատ է:

համայնքում գյուղատնտեսական
հողերից ոռոգվող
հողատարածքների տոկոսը,

- լուսավորության համակարգի
առկայությամբ փողոցների
տոկոսը՝ համայնքի ընդհանուր
փողոցների մեջ և նշել
էներգախնայող և ԼԵԴ
լուսավորություն է, թե ոչ

Համայնքի ներսում լուսավորված ճանապարհների երկարությունը
23,5 կմ է:

Համայնքում ոռոգման համակարգը բացակայում է, քանի որ
համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը անջիղի են:

Տաշիր խոշորացած համայնքն ընդգրկում է Տաշիր քաղաքային
և 11 գյուղական բնակավայրեր: Բնակավայրերը յուրաքանչյուրում
առկա են բազմաթիվ խնդիրներ, սակայն հանրային քննարկումների
և լուծումների արդյունքում առաջնահերթություն փոխվեց Լեռնահովիտ
բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցման հարցին:

Բնակչության զբաղվածությունը, միգրացիան և աղքատության
հաղթահարումը համայնքի գերակա խնդիրներն են, որոնց լուծման
միջոցներից առաջնայինը համարվում է տեղական տնտեսության
զարգացումը:

Լեռնահովիտ բնակավայրի ջրամբարը կառուցվել է 1980-ական
թվականներին և կառուցումից ի վեր չի վերանորոգվել՝ գտնվում է
խալիսկված վիճակում: Տնտեսական առումով մեծ պոտենցիալ
ունեցող բնակավայրի կայուն ջրամատակարարմամբ ոչ միայն
կբարձրանա բնակիչների կյանքի որակը և կբարելավվի
տարրական սանիտարահիգիենիկ վիճակը, այլև բարենպաստ
պայմաններ կստեղծվեն ներդրումային ծրագրերի իրականացման
տեսանկյունից:

Լեռնահովիտ բնակավայրը հայտնի է իր զարգացած
անասնապահությամբ և նորագույն տեխնոլոգիաներով զինված
Ֆերմերային տնտեսություններով, որոնց բնականոն ու անխափան
շահագործման և գյուղական տուրգմի համար գրավիչ վայր
ստեղծելու համար բնակավայրը չունի համապատասխան
ենթակառուցվածքներ, և դրանցից առաջնայինը ջրամբարի և
ջրագծի վերակառուցումն է:

Բնակավայրերի կայուն զարգացումը և ենթակառուցվածքների
բարեկարգումը կամայնքի ռազմավարական զարգացման
կարևորագույն կետերից է:

Ծրագրի արդյունքում կունենանք՝

1. կունենանք վերանորոգված ջրամբար 800 խմ

վերջապես կունենանք գոհ ու երջանիկ բնակիչ, ով կուզենա մնալ և
զարգացնել իր բնակավայրը:

Ծրագրի ընդհանուր
նկարագրությունը և դրա
իրականացման
անհրաժեշտությունը

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

- Ծրագրի ավարտին ակնկալում ենք ունենալ
- կունենանք վերանորոգված ջրամբար 800 խմ,
 - վերջապես կունենանք գոհ ու երջանիկ բնակիչ, ով կուզենա մնալ և զարգացնել իր բնակավայրը
 - կավելանա հեռագնա արուսներից օգտվողների թիվը
 - զարգացած գրոսաշրջություն
 - զարգացած անասնապահություն:

Ծրագրով նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում: Այս աշխատանքները կյանքի կոչելու համար՝

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները

- համայնքապետարանը 2020 թվականի բյուջեով կնախատեսի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,
- համայնքը կստանա ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ,
- համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից Գնումների մասին ՀՀ Օրենքին, գնումների հետ կապված ՀՀ Կառավարության որոշումներին և օրենսդրական այլ ակտերին համապատասխան, կկազմակերպվի նախ այդ աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, ապա, այդ փաստաթղթերին համապատասխան, աշխատանքների կատարման գնման գործընթաց,
- կկատարվեն ծրագրով նախանշված աշխատանքները,
- կապահովվի աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, ինչպես նաև վերահսկողություն համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից,
- աշխատանքների ավարտից հետո շինարարական կազմակերպության /կազմակերպությունների/, համայնքապետարանի, տեխնիկական, հեղինակային վերահսկողների և նախագիծը կազմողների միջև կիրականացվեն հանձման-ընդունման աշխատանքներ, համայնքում կունենանք վերանորոգված և ներ կառուցված ենթակառուցվածքներ:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

Ջրամբարը և ջրամբարի փարածքը սեփականության իրավունքով պատկանում են Տաշիրի համայնքապետարանին: Այս ենթակառուցվածքների նորոգման համար կկատարվեն կապիտալ բնույթի ծախսեր, ինչի արդյունքում ջրամբարի արժեքը կավելանա 50.000.000 ՀՀ դրամով:

Ծրագրի ազդեցությունը համայնքի
և շահառուների վրա

Ծրագրի հիմնական շահառուները Լեոնահովիտ բնակավայրի 1566
բնակիչներն են և համայնք այցելող շուրջ 5000 զբոսաշրջիկները:

Նշել ծրագրի իրականացման
ընթացքում ստեղծվող
ժամանակավոր և հիմնական
աշխատատեղերի քանակը և
դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն ժամանակավոր 5-
7 աշխատատեղ:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն
և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 798424.0 դրամ.
Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և
կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի
վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի
ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին
բացվածքով:

	Պլանը	Փաս- տացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերը/հազ. դրամ/	798424.0	704603.0	88.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	714089.5	620268.4	86.9
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	487342.1	484958.6	99.5
- Սեփական եկամուտներ	168017.9	165634.5	98.6
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	330181.0	220744.3	66.9
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	245847.4	136909.8	55.5
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	84334.5	84334.5	100
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	798424.0	558282.5	69.9
- Վարչական բյուջեի ծախսեր	487342.1	382316.6	78.4
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	330181.9	177065.9	53.6
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	330181.9	177065.9	53.6
- ճանապարհաշինություն	63456.1	52983.1	83.5

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	94529.2	75950.8	80.3
- ջրամատակարարում	434.5	304.0	70
- փողոցային լուսավորություն	56294.0	41490.0	73.7
- շրջակա միջ. Պահպանություն	4800.0	4800.0	100
- կոմունալ ծառայություն	2000.0	1335.0	66.7
- բնակ. Շին.	114668.1	19213.9	16.8
- մշակույթ			
* Գույքի օտարումից մուտքեր	-6000.0	-19010.8	316.8

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

745026.8 դրամ.

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /հազ.	745026.8
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների առանձնացում	570706.1
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	570706.1
- սեփական եկամուտներ	178477.4
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	146320.7
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	0
- Տարեսկզբի ազատ մնացորդ	146320.4
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,	717026.81
- Վարչական բյուջեի ծախսեր	570706.1
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	146320.7
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	146320.7
- ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	31198.9
- ճանապարհաշինություն	25472.7
- շրջակա միջավայրի պահպանություն	20500.0
- ջրամատակարարում	15149.0
- լուսավորություն	35000.1
- գյուղատնտեսություն	16500.0
- կոմունալ ծառայություն	1500.0
- բնակարարային շինարարություն	29000.0
- գույքի օտարումից մուտքեր	-28000.0

Համայնքի 2021թ-ի բյուջեի նախատեսված ընդհանուր մուտքերը կազմում է 717026.8 դրամ, որից վարչական բյուջեի մուտքեր՝ 570706. դրամ

Որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ – 182829.3 դրամ /իր մեջ ներառում է ապարարի պահպանման՝ աշխատավարձ, գործուղումներ, կոմունալ վճարումներ, կապ, տրանսպորտային նյութեր, համակարգչային ծառայություններ և այլ ծախսեր/

Պաշտպանություն – 2000.0

Տնտեսական հարաբերություններ – 16972.7 դրամ /իր մեջ ներառում է գյուղատնտեսության, տրանսպորտի և ճանապարհային բնագավառում իրականացվելիք ծախսերը/

Շրջակա միջավայրի պաշտպանություն – 76000.0 դրամ /իր մեջ ներառում է աղբահանության և սելավափարերի մաքրման, կեղտաջրերի հեռացման ծախսեր/

Կոմունալ ծառայություն – 174559.1 դրամ /իր մեջ ներառում է ջրամատակարարման և լուսավորման ծառայություններ/

Առողջապահություն – 0

Մշակույթ – 44810.0 դրամ / , ՀՈԱԿ-ի պահպանման ծախսեր /ՀՈԱԿ-ում գործում է մշակույթի տուն և մանկապարտեզ/

Կրթություն – 121,155.0 դրամ /ներառում է նախադպրոցական և նիժնակարգ կրթության բնագավառի ծախսեր/

Սոցիալական պաշտպանություն – 6500.0 դրամ /համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն/

Պահուստային ֆոնդ՝ 92200.7 դրամ:

Նշված ծախսերի հետ գույքահեռ միայն բյուջեով հնարավոր չէ իրականացնել Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցման ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝

- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,

50.000.000 դրամ (100%)

շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 1.500.000 դրամ,

- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 500.000 դրամ,

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 90.000 դրամ,

- տեխնիկական հսկողության
ծառայությունների արժեքը՝
_____ դրամ,

- հեղինակային հսկողության
ծառայությունների արժեքը՝
_____ դրամ,

- գոյություն ունեցող շենք-
շինությունների տեխնիկական
վիճակի վերաբերյալ
փորձաքննության ծառայության
արժեքը՝ _____ դրամ,

ինչպես նաև առանձին
ներկայացնել հասարակական
շենքերի և բազմաբնակարան
շենքերի ընդհանուր օգտագործման
գույքի կառուցման/նորոգման
դեպքում՝ էներգախնայողության
միջոցառումների արժեքը _____
դրամ

Համայնքի կողմից ներդրվող
մասնաբաժնի չափը

15.000.000 (30%)

Այլ ներդրողներ

10.000.000 դրամ (20%), Տաշիր բարեգործական հիմնադրամ:

Ծրագրի իրականացման
տևողությունը

Ակիզբը 01.05.2021թ. Տևողությունը 7 ամիս:

Ծրագրի ծախսերը

Ծրագրի ընդհանուր շինարարական արժեքը կազմու է
47.760.000 ՀՀ դրամ:

Ամսաթիվ

20...թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ hayarpi.kirakosyan@bk.ru, (+374)77-818568

Համայնքի ղեկավար՝



Էդգար Արշակյան
(անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2021 թվականի N 47-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԶՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Լեռնահովիտ բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում» սուբվենցիոն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ	ԱՆՈՒՆԱԶԳԱՆՈՒՆ	կողմ 9	դեմ չկա	ծեռնպահ չկա
1	Բաղդասարյան Կարեն			
2	Բաղդասարյան Միշա			
3	Գալստյան Անդրանիկ			
4	Հարությունյան Սարգիս			
5	Մարդոյան Հայկ			
6	Մարդոյան Սուսան			
7	Պողոսյան Արթուր			
8	Ռեվազյան Հայկանուշ			
9	Վելիցյան Նորիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021 մայիսի 31
ք. Տաշիր



Հ Ա Յ Տ

**Տաշիր համայնքի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների
զարգացմանն ուղղված սուբվենցիաների**

Ծրագրի անվանումը	Տաշիր համայնքի աղբի կոնսերվացման ծրագիր::
Մարզ	Լոռու մարզ:
Համայնքը /համայնքները	Տաշիր խոշորացված համայնք՝ Տաշիր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 163 կմ է, մարզկենտրոն Վանաձորից՝ 53 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	01.01.2019թ. պետքերգիստրի տվյալների համաձայն 16126 մարդ:
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Ոչ:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,	Տաշիր համայնքի բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրը կենտրոնացված ջրամատակարարումն է: Ջրամատակարարման համակարգը սպասարկում է Վեոլիա Ջուր ընկերությունը: Համայնքում տեղադրված են ջրաչափեր և սահմանված է ջրի վարձ: Համայնքի բնակչության 95 %-ին խմելու ջուրը հասանելի է: Ջրամատակարարումը 24 ժամյա է: Համայնքն ունի կոյուղագիծ և փնային փնտեսությունների 60 %- ը միացված է կոյուղագծին: Համայնքն ունի կենտրոնացված գազամատակարարում: Համայնքի ներբնակավայրային ճանապարհային ցանցի երկարությունը 59,5 կմ է , որից ասֆալտապատ՝ 15,860 կմ, խճային՝ 31.04կմ, գրունտային՝ 12,5 կմ: Ներբնակավայրի ճանապարհային ցանցի վիճակը վատ է: Համայնքի ներսում լուսավորված ճանապարհների երկարությունը 23,5 կմ է: Համայնքում ոռոգման համակարգը բացակայում է, քանի որ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը անջիղի են:

- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Տաշրի համայնքին միավորված 11 գյուղական բնակավայրերում աղբահանություն չի իրականացվել, աղբամաններ համայնքներում տեղադրված չեն: Քանի որ համայնքը ընդլայնվել է և ծառայություններից օգտվողների թիվն ավելացել, հետևաբար որպեսզի աղբահանությունն իրականացվի համաձայն համապատասխան նորմերի, անհրաժեշտ է կատարել աղբավայրի կոնսերվացման աշխատանքներ: Համայնքը սեփական ումիջոցներով աղբի փակման գործընթացը չի կարողանա իրականացնել առանց պետական աջակցման: Ծրագիրը որը կլուծի բնապահպանական խնդիրներ, կկայունանա էկո համակարգը և բարենպաստ պայմաններ կստեղծվի համայնքի զարգացման համար և կծառայի մյուս համայնքներին որպես օրինակ: Ծառայության շարունակական և անխափան սպասարկումը և շահագործումը կիրականացվի արդեն իսկ առկա համայնքի ոչ առևտրային կազմակերպության(ՀՈԱԿ) կողմից:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Տաշիր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջակա միջավայրի պահպանություն բաժնում որպես գերակա խնդիրներ են նշվել աղբավայրի ցանկապատումն ու աղբի կոնսերվացումը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում համայնքը կունենա կոնսերվացված աղբավայր, ինչի արդյունքում կհասնենք ծրագրի իրականացման նպատակին:

Ծրագրով նախատեսված արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ աշխատանքների իրականացման ընթացքում համայնքում շինարարության ոլորտում կստեղծվեն շուրջ 5-6 ժամանակավոր աշխատատեղեր:

Ծրագրի կյանքի կոչվելու պարագայում համայնքը բարեկարգ կդառնա նաև գրոսաշրջիկների համար, ինչը կնպաստի համայնքում գրոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի ավարտին ակնկալում ենք ունենալ հետևյալ արդյունքները

- Բարեկարգ էկոմիջավայր:
- 10 հա կոնսերվացված աղբավայր
- Տուրիզմի և հանգստի բարեկարգ գոտիներ:
- Ապահովված կենսաբազմազանություն:

- Մաքուր օդ:

Ծրագրով նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է կոնսերվացնել և աղբից մաքրել 10 հա տարածք:

Այս աշխատանքները կյանքի կոչելու համար՝

- համայնքապետարանը 2020 թվականի բյուջեով կնախատեսի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,
- համայնքը կստանա ՀՀ պետական բյուջեից նպատակային հապկացումներ՝ սուբվենցիաներ,
- համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից Գնումների մասին ՀՀ Օրենքին, գնումների հետ կապված ՀՀ Կառավարության որոշումներին և օրենսդրական այլ ակտերին համապատասխան, կկազմակերպվի նախ այդ աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման, ապա, այդ փաստաթղթերին համապատասխան, աշխատանքների կատարման գնման գործընթաց,
- կկատարվեն ծրագրով նախանշված աշխատանքները,
- կապահովվի աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, ինչպես նաև վերահսկողություն համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից, աշխատանքների ավարտից հետո շինարարական կազմակերպության /կազմակերպությունների/, համայնքապետարանի, տեխնիկական, հեղինակային վերահսկողների և նախագիծը կազմողների միջև կիրականացվեն հանձման-ընդունման աշխատանքներ, համայնքում կունենանք վերանորոգված և ներ կառուցված ենթակառուցվածքներ:

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

10 հա մակերեսով աղբավայրը հանդիսանում է համայնքային սեփականություն: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող տարածքի կադաստրային արժեքը կավելանա 30.000.000 ՀՀ դրամով: Ծրագրային ծախսերը կապիտալ բնույթի են:

Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա

- Ծրագրի հիմնական շահառուները Տաշիր համայնքի 16126 բնակիչներն են:

Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն ժամանակավոր 5-6 աշխատատեղեր:

**Համայնքի նախորդ տարվա
բյուջեն և բյուջեի կատարողականը**

Նախորդ տարվա բյուջեն՝ 798424.0 դրամ.
Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և
կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի
վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի
ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին
բացվածքով:

	Պլանը	Փաս- տացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերը/հազ. դրամ/	798424.0	704603.0	88.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդթվում՝	714089.5	620268.4	86.9
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	487342.1	484958.6	99.5
- Սեփական եկամուտներ	168017.9	165634.5	98.6
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	330181.0	220744.3	66.9
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	245847.4	136909.8	55.5
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	84334.5	84334.5	100
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	798424.0	558282.5	69.9
- Վարչական բյուջեի ծախսեր	487342.1	382316.6	78.4
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	330181.9	177065.9	53.6
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	330181.9	177065.9	53.6
- ճանապարհաշինություն	63456.1	52983.1	83.5
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	94529.2	75950.8	80.3
- ջրամատակարարում	434.5	304.0	70
- փողոցային լուսավորություն	56294.0	41490.0	73.7
- ջրջակա միջ. Պահպանություն	4800.0	4800.0	100

-կոմունալ ծառայություն	2000.0	1335.0	66.7
-բնակ. Շին.	114668.1	19213.9	16.8
-մշակույթ			
* Գույքի օտարումից մուտքեր	-6000.0	-19010.8	316.8

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

745026.8 դրամ.

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /հազ.	745026.8
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների առանձնություն	570706.1
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	570706.1
- սեփական եկամուտներ	178477.4
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	146320.7
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	0
- Տարեսկզբի ազատ մնացորդ	146320.4
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,	717026.81
- Վարչական բյուջեի ծախսեր	570706.1
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	146320.7
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	146320.7
- ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	31198.9
- ճանապարհաշինություն	25472.7
- շրջակա միջավայրի պահպանություն	20500.0
- ջրամատակարարում	15149.0
- լուսավորություն	35000.1
- գյուղատնտեսություն	16500.0
- կոմունալ ծառայություն	1500.0
- բնակարարին շինարարություն	29000.0
- գույքի օտարումից մուտքեր	-28000.0

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության

Համայնքի 2021թ-ի բյուջեի նախատեսված ընդհանուր մուտքերը կազմում է 717026.8 դրամ, որից վարչական բյուջեի մուտքեր՝ 570706. դրամ

Որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ – 182829.3 դրամ /իր մեջ ներառում է ապարարի պահպանման՝ աշխատավարձ, գործուղումներ, կոմունալ վճարումներ,

հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով

կապ, տրանսպորտային նյութեր, համակարգչային ծառայություններ և այլ ծախսեր/

Պաշտպանություն – 2000.0

Տնրեսական հարաբերություններ – 16972.7 դրամ /իր մեջ ներառում է գյուղատնտեսության, տրանսպորտի և ճանապարհային բնագավառում իրականացվելիք ծախսերը/

Շրջակա միջավայրի պաշտպանություն – 76000.0 դրամ /իր մեջ ներառում է աղբահանության և սելավափարերի մաքրման, կեղտաջրերի հեռացման ծախսեր/

Կոմունալ ծառայություն – 174559.1 դրամ /իր մեջ ներառում է ջրամատակարարման և լուսավորման ծառայություններ/

Առողջապահություն – 0

Մշակույթ – 44810.0 դրամ /, ՀՈԱԿ-ի պահպանման ծախսեր /ՀՈԱԿ-ում գործում է մշակույթի տուն և մանկապարտեզ/

Կրթություն – 121155.0 դրամ /ներառում է նախադպրոցական և նիջնակարգ կրթության բնագավառի ծախսեր/

Սոցիալական պաշտպանություն – 6500.0 դրամ /համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն/

Պահուստային ֆոնդ՝ 92200.7 դրամ:

Նշված ծախսերի հենք գույքահեռ միայն բյուջեով հնարավոր չէ իրականացնել Տաշիր աղբի կոնսերվացման ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝

30.000.000 դրամ (100%)

- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը՝ _____ դրամ,

շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 900.000 դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,

- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 600.000 դրամ,

- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 120.000 դրամ,

- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,

- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 90.000 դրամ

- գոյություն ունեցող շենք-
շինությունների տեխնիկական
վիճակի վերաբերյալ
փորձաքննության ծառայության
արժեքը՝ _____ դրամ,

ինչպես նաև առանձին
ներկայացնել հասարակական
շենքերի և բազմաբնակարան
շենքերի ընդհանուր
օգտագործման գույքի
կառուցման/նորոգման դեպքում՝
էներգախնայողության
միջոցառումների արժեքը
_____ դրամ

Համայնքի կողմից ներդրվող
մասնաբաժնի չափը

16.500.000 (55%)

Այլ ներդրողներ

Ծրագրի իրականացման
տևողությունը

Սկիզբը 01.06.2021թ. Տևողությունը 7 ամիս:

Ծրագրի ծախսերը

Ծրագրի ընդհանուր շինարարական արժեքը կազմու է
28.290.000 ՀՀ դրամ:

Ամսաթիվ

05.03.2021թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց
տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի
զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու
ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Հ. Կիրակոսյան

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ hayarpi.kirakosyan@bk.ru, (+374)77-818568

Համայնքի ղեկավար՝



Էդգար Արշակյան
(անունը, ազգանունը)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2021 թվականի N 48-Ա

«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԻ ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել «Տաշիր համայնքի աղբի կոնսերվացում» սուբվենցիոն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ	ԱՆՈՒՆԱԶԳԱՆՈՒՆ	Կողմ 9	դեմ չկա	ձեռնպահ չկա
1	Բաղդասարյան Կարեն			
2	Բաղդասարյան Միշա			
3	Գալստյան Անդրանիկ			
4	Հարությունյան Սարգիս			
5	Մարդոյան Հայկ			
6	Մարդոյան Սուսան			
7	Պողոսյան Արթուր			
8	Ռեվազյան Հայկանուշ			
9	Վելիցյան Նորիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021 մայիսի 31
ք. Տաշիր



Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների
զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում՝ նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով:
Մարզ	Լոռու մարզ:
Համայնքը /համայնքները	Տաշիր խոշորացված համայնք՝ ք. Տաշիր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 163 կմ է, մարզկենտրոն Վանաձորից 53 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	01.01.2019թ. պետոգիստրի տվյալների համաձայն 16028 մարդ:
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Ոչ:
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից	Տաշիր համայնքի բնակչության խմելու ջրի հիմնական աղբյուրը կենտրոնացված ջրամատակարարումն է: Ջրամատակարարման համակարգը սպասարկում է Վեոլիա Ջուր ընկերությունը: Համայնքում տեղադրված են ջրաչափեր և սահմանված է ջրի վարձ: Համայնքի բնակչության 95 %-ին խմելու ջուրը հասանելի է: Ջրամատակարարումը 24 ժամյա է: Համայնքն ունի կոյուղագիծ և տնային տնտեսությունների 60 %-ը միացված է կոյուղագծին: Համայնքն ունի կենտրոնացված գազամատակարարում: Համայնքի ներբնակավայրային ճանապարհային ցանցի երկարությունը 59,5 կմ է, որից ասֆալտապատ՝ 15,860 կմ, խճային՝ 31,04կմ, գրունտային՝ 12,5 կմ: Ներբնակավայրի ճանապարհային ցանցի վիճակը վատ է: Համայնքի ներսում լուսավորված ճանապարհների երկարությունը 23,5 կմ է: Համայնքում ոռոգման համակարգը բացակայում է, քանի որ համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը անջիղի են:

ռոռգվող հողատարածքների տոկոսը,

- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Տաշիր համայնքի լուսավորվածության աստիճանը ներկա պահին 60 % է: Ծրագրով ներկայացված փողոցները մեծամասամբ կենտրոնական են և առաջնային կարևորության նշանակությաուն ունեն՝ հարակից են ոստիկանությանը, դպրոցների, արվեստի և մարզական դպրոցների, որոնց դասաժամերը հիմնականում ավարտվում են երեկոյան ժամերին, հետևաբար կարևորությունը այստեղ ձրավորվել է անհրաժեշտությունից ելնելով: Ծրագրի իրականացման անհրաժեշտությունն է՝ համայնքում երեկոյան ժամերին ապահովել բնակիչների անվտանգ տեղաշարժը և կարգավորել փողոցի արտաքին տեսքը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա համայնքում ավելացնել լուսավորության ցանցը, որի միջոցով կլուսավորվի համայնքի Շահումյան, Վան, Անի, Գագարին, Միջուրին, Օրբելի, Խուոյակով և մի շարք այլ փողոցները: Ներկա պահին տեղադրված փողոցային լուսավորությունը(լուսավոր սարքեր, լամպեր) մեծամասամբ ցածրորակ են: Արդյունքում համայնքապետարանի շահագործման և պահպանման ծախսերն աճում են՝ դրանց փոխարինման մեծ ծախսերի, ինչպես նաև փողոցային լուսավորության պահանջվող մակարդակը ապահովելու նպատակով բարձր հզորության լամպեր տեղադրելու անհրաժեշտության պատճառով: Սա իր հերթին հանգեցնում է էներգիայի չարդարացված բարձր սպառման:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Տաշիր համայնքի առաջիկա 5 տարիների անմիջական ռազմավարական նպատակներնից մեկն է ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ: Ծրագրի իրականացմամբ կունենանք 1.բնակիչների կյանքի որակի բարելավում

2. լուսավրված 10 և ավել ներհամայնքային փողոցներ

3. անվտանգ երթևեկություն

4.երեկոյան ժամերի պատահարների թվի կրճատում:

Ծրագրի իրականացման նպատակն է ունենալ Տաշիր քաղաքի Շահումյան, Վան, Անի, Գագարին, Միջուրին, Օրբելի, Խուոյակով և մի շարք այլ փողոցներում էներգախնայող և անվտանգ արտաքին լուսավորության ցանց:

Ծրագրի ավարտին ակնկալվում է ունենալ արդիականացված լուսավորության համակարգ՝ նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման միջոցով. Շահումյան, Վան, Անի,

Գագարին, Միչուրին, Օրբելի, Խուդյակով և մի շարք այլ փողոցներում, կլինեն տեղադրված 264 էներգախնայող լուսատու:

